

ՀԵԹՈՒՄ ՆՂԻՐՑՈՒ ՉԱՓԱՄՈՆ ԲԱՐԻՔԱՐՈՒԿ ԲԵՐՂՈՒՄ Ս. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՆՂՐԱՆ ԱՌԹԻՎ (1326 թ.)¹

ՆԱԽԱԲԱՆ

Կիրիկիայում 1332 թ. ընդօրինակված մի ձեռագրում (Մատենադարան, ձեռ. 1347, այսուհետեւ՝ ՄՄ)² կազմի առաջին երեսի ներսի կողմին, հետագայում կցված երկու թերթի հանդիպակաց էջերին պահպանվել է 1326 թվագրմամբ մի անտիպ չափածո բնագիր³, որի հեղինակը Կիրիկյան Հայաստանի ԺԴ. դարի նշանավոր պետական գործիչ Հեթում Նղիրցին է (նկ. 1): Դրվատական բովանդակությամբ այս երկը հասցեագրված է Լեւոն Դ. (1320–1342) թագավորին³, որն այդ ժամանակ 16 տարեկան էր, իսկ Հեթում Նղիրցին՝ արքունի սենեկապետը, անչափահաս գահակալի խնամակալներից մեկն էր: Ինչպես երեւում է բնագրի բովանդակությունից, այն գրվել է Բարիքարուկ բերդի հիմնովին վերաշինման եւ այստեղ Ս. Նիկողայոս Աքանչեւագործի անունով եկեղեցու հիմնադրման առիթով, միաժամանակ մի շարք կարեւոր մանրամասներ է պարունակում, արժեքավոր է այս բերդի հիշատակման եւ նրա տեղորոշման տեսանկյունից:

¹* Ստացվել է՝ 8.08.2025, գրախուսվել է՝ 9.09.2025: Էլ. հասցե՝ karenmatevosian@gmail.com:

² Մատենադարանի ձեռագրերի Մայր ցուցակում այն համարվել է «Յաւելագրութիւն ժ2.—Ժէ. դդ.», ներկայացվել որպէս «Ոտանաւոր աղերս», մեջբերված հատվածում նշված է. «...յաստուածապահ եւ յանառիկ բարի քարկու մէջ Կլայիս»: Այսինքն՝ «Բարիքարկու»-ն տեղանուն չի համարվել, փոխարենը մեծատառ է նշվել «կլայ»-ը, որը տվյալ դեպքում նշանակում է բերդ (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անունան Մատենադարանի, հտ. Դ., կազմեցին Ա. Քեօշեքեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան, Երեւան, 2008, էջ 1040):

³ Գրականության մեջ այս թագավորը հաճախ կոչվում է «Լեւոն Ե.»։ Դա գալիս է այն բանից, որ Կիրիկյան Հայաստանի առաջին թագավորը՝ Լեւոն Մեծագործը, մինչեւ թագադրվելը եղել է Լեւոն Բ. իշխան: Թագադրությունից հետո նրան պետք է համարել Լեւոն Ա. թագավոր, որի հաջորդների մեջ Օշինի որդի Լեւոնը չորրորդն է, եւ նա այդպես է ընկալվել նաեւ այն ժամանակ, ինչպես տեսնում ենք 1326 թ. մի հիշատակարանում. «Գրեցաւ... Աւետարանս ի թուականութեանս Հայոց ՉԶԵ (1326), ի մայրաքաղաքս ի (Սիս) ի թագաւորութեանս Զորրորդ Լեւոնի որդոյ արքային Հայոց Աւշինի» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ. դար, կազմողներ Լ. Նաչիկյան, Ա. Մաթեւոսյան, Ա. Ղազարոսյան, մասն Բ., Երեւան, 2020, էջ 14):

ՄՄ 1347 ՁԵՌԱԳԻՐԸ ԵՒ ՉԱՓԱԾՈՆ ԱՐՏԱԳՐՈՂԸ

Ձեռագիրը գրվել է 1332 թ. Կիլիկիայում, պարունակում է Հովհաննես Ոսկեբերանի «Մեկնութիւն Յովհաննու» գործը, գրիչը եւ ստացողն է Վահրամի որդի Գրիգորը⁴: Գլխավոր հիշատակարանում գրիչը նշում է. «Գրեցաւ ի թուականութեանս Հայոց 92Ա. (1332), ի թագաւորութեանն Լեւոնի աստուածասիրի, որդւոյ Աւշինի... ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Նշանին, մերձ յաստուածապահ ամրոցն, որ կոչի Անդրունին բերդ»⁵: Կարծում ենք, որ նախընտրելի է սույն ձեռագրի գրչության վայրը նշել այնպես, ինչպես դա ժամանակին արել է Լեւոն Խաչիկյանը ԺԴ. դարի հիշատակարանների հրատարակության մեջ. «Մերձ ամրոցն, որ կոչի Անդրունին բերդ»⁶:

Մեր նյութի տեսակետից կարելոր է պարզել, թե ինչպես եւ ում միջոցով են ձեռագրի կազմին հաջորդող մասում հայտնվել այն երկու թղթյա թերթերը, որոնց վրա գրված է Հեթում Նղիրցու չափածոն: Ինչպես նշվեց, այն գտնվում է ձեռագրի սկզբում (էջ 1բգ), իսկ հաջորդող թերթերից մեկին (էջ 1ե) մի կարճ՝ եռատող հիշատակագրություն է եղել, որը հետագայում թանաքով ջնջել են: Գրչության վերաբերյալ Մայր ցուցակում նշված է՝ «(ԺԷ.—ԺԸ. դդ. ջնջուած, միայն մեկ անուն) /// Պաւղոս ///»⁷: Ջնջված հատվածը հնարավոր եղավ վերականգնել Մատենադարանում՝ կրկնագրերի վերծանության արդիական միջոցների կիրառմամբ.

«Ս(ուր)բ Հրեշտակապետացն է գիրքս, որ յԵ(րուսաղէ)մ
եւ յիշատ(ակ) Պաւղոս արեղին:

Ա(ստուա)ծ ա(ւր)հ(ն)է զլաւ պահաւ(ղ)քն» (նկ. 2):

Այստեղ ինքնատիպ գրչությամբ «հ» տառը նույնությամբ բազմիցս կրկնվում է չափածոյի շարագրանքում, որից, եւ գրչական այլ տվյալնե-

⁴ Մատյանի գրանչութիւն թուղթ է, ձեռագրագիտական մյուս տվյալները տե՛ս Մայր ցուցակ, էջ 1034–1042:

⁵ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ. դար, էջ 142:

⁶ ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 251: Մայր ցուցակում գրչության վայրը նշված է՝ «Ականց վանք» (Մայր ցուցակ, էջ 1035), չնայած հիշատակարանում այդ մասին ուղիղ վկայություն չկա, միայն նշվում է նախորինակի՝ Ակների վանքի փակակալի կողմից տրամագրվելու մասին: Ակների վանքը շուրջ 100 կմ հեռու է Անդրունին բերդից:

⁷ Մայր ցուցակ, էջ 1042:

րից ելնելով՝ կարող ենք ասել, որ Հեթում Նդիրցու երկն արտագրողը հենց այս Պողոս արեղան է եղել⁸:

Միաժամանակ պարզ դարձավ, որ Պողոս արեղան երեք այլ հիշատակագրություն ունի նաեւ ձեռագրի միջնամասում: Երկուսը 210թ էջում են, որոնցից առաջինը հաջորդում է ձեռագրի բուն գրչի հիշատակարանին, որի վերջին խոսքերը կազմողի մասին են. «...եւ զՄարտիրոսն, որ զգիրքս կազմեաց յիշատակ բարի իւր եւ ծնողաց իւրոց...»⁹: Դրանից հետո գիծ է քաշված, որի տակ գրված է. «Այլ աղաչեմ զամենեսեան, որ լի սրտիւ Ա(ստուա)ծ ողորմի ասէք Պաւղոս արեղին եւ իւրոցն ամենայնի, ամէն ու Ռ. (1000) ամէն»: Իսկ նույն էջի ներքեւում գրված է. «Ս(ուր)բ Հ(րե)շտ(ա)կ(ապետ)ացն է գիրքս, որ յԵ(րուսաղէ)մ, եւ յիշատակ Պաւղոս արեղին» (նկ. 3): Զարմանալի կերպով այս երկու հիշատակագրություններն էլ դուրս են մնացել Մայր ցուցակից: Պողոս արեղայի վերջին հիշատակագրությունը՝ 422թ էջում, գրված է կազմող Մարտիրոսի հիշատակագրությունից հետո¹⁰:

Այսպես՝ հավանաբար ստեղծումից որոշ ժամանակ անց (ենթադրաբար ԺԵ.—ԺԶ. դդ.) ձեռագիրը պատկանել է Պողոս արեղային, որն էլ նրա մեջ գրել է իր հիշատակագրությունները, սկզբում կցել է նաեւ երկու թերթ, որոնց հանդիպակաց էջերում իր արտագրած չափածոն էր, եւ մատյանը նվիրել է Երուսաղեմի Սբ. Հրեշտակապետաց եկեղեցուն: Հետագայում ձեռագիրը հայտնվել է այլ տեղերում: ԺԹ. դարում այն Ս. Էջմիածնում էր, որտեղ 1884 թ. հիշատակագրություն է թողել Մեսրոպ Սմբատյանցը¹¹, եւ հավանաբար այդ ժամանակ էլ ջնջել են ձեռագրի սկզբի (էջ 1ե) հիշատակագրությունը՝ թաքցնելու համար մատյանի պատկանելությունը Երուսաղեմի Սբ. Հրեշտակապետաց եկեղեցուն:

Մեր հետազոտության համար էականն այն է, որ չափածոն արտագրողը եղել է Պողոս արեղան, որը հավանաբար Երուսաղեմի միաբան էր եւ թերեւս հենց այնտեղ եղած ձեռագրերից մեկից կամ գուցե առանձին

⁸ Բուն ձեռագրի ուսումնասիրմանը մասնակցել է Մատենադարանի ձեռագրատան աշխատակից, բանասիրական գիտ. թեկնածու Լիլիթ Հովսեփյանը, որն ընդօրինակել է տեքստը եւ նկատել դրա ու Պողոս արեղայի գրի նմանությունը, որի համար շնորհակալություն ենք հայտնում:

⁹ Մայր ցուցակ, էջ 1041:

¹⁰ «Ով եղբայրք եւ զիս՝ զանարժան արեղայս զՊաւղոս, բազում մեղաւք լցեալ, յիշեցէք. եւ Աստուած յիշէ զձեզ, ամէն» (նույն տեղում):

¹¹ Մայր ցուցակ, էջ 1042:

մի թղթից է արտագրել այդ բնագիրը: Ինչ վերաբերում է նրան՝ որպես գրչի, ապա պետք է նշել, որ անգամ կարճ հիշատակագրությունների մեջ տառերի վրիպակներ կան¹², եւ նույնաբնույթ վրիպակներ տեսնում ենք չափածոյում¹³: Սակայն, ինչ խոսք, Հեթում Նղիրցու սույն չափածոն արտագրելով եւ դրանով իսկ կորստից փրկելով՝ Պողոս արքեպիսկոպոս ծառայություն է մատուցել հայագիտությանը:

ԶԱՓԱԾՈՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն անխորագիր չափածո երկը պայմանականորեն կարելի է վերնագրել «Ի հիմնարկութիւն Սուրբ Նիկողայոս եկեղեցւոյ ի բերդս Բարիքարուկ»: Այն բաժանել ենք տների, քանի որ այդ հատվածներից յուրաքանչյուրն ամփոփ միտք է արտահայտում, ընդ որում՝ առաջին երեքը 12 տողանոց են:

Առաջին տունը նախաբանի տեսք ունի. սկսվում 1326 թվականի¹⁴ նշումով, եւ ասվում է, որ այդ ժամանակ Բարիքարուկ անառիկ բերդի ներսում («Բարիքարկու՝ մէջ կլայիս») հիմնադրվել է Սուրբ Նիկողայոս Զմյուռնիացի հայրապետի անունով եկեղեցին («սուրբ տաճարը»): Ապա հեղինակը Նիկողայոս հայրապետի, Աստվածածնի եւ Հովհաննես Մկրտչի աղոթքներով Աստծու բարեգթությունն է հայցում այս գործը կատարողների համար, որն արվել է «Ի փրկութիւն Հայոց ազգի»:

Երկրորդ տունը նվիրված է Լեւոն Դ.-ի՝ որպես գահակալի անմիջական նախնիներին: Հեղինակն Աստծուց նրանց մեղքերի թողություն է հայցում («Շնորհեայ նոցայ ըզթողութիւն»)՝ առաջինը հիշատակելով Հեթում Բ.-ին, որը մահվան ժամանակ ավագ պարոնի կարգավիճակ ուներ, իսկ թագավորը նրա հանգուցյալ Թորոս եղբոր տասնութամյա որդի Լեւոն Գ.-ն. էր: 1307 թ. Կիլիկիայում գտնվող մոնղոլ զորավար Բիլարղուն նրանց իր մոտ հրավիրեց եւ դավադրաբար սպանեց, որից հետո Հեթումի ավագությունը

¹² Առաջին հիշատակագրության մեջ (էջ 1ե) «պահաւ(ղ)քն» գրել է «ղ» տառի վրիպումով, հաջորդում (էջ 210բ) «աղաչէմ» բառի վերջին 2 տառը բաց է թողել, ապա ավելացրել տողի վերեւում:

¹³ Բնագրում «Ալինա(խ)», «հով(վ)ել» բառերը գրված են վրիպակներով, «Երբ»-ի փոխարեն՝ վրիպակով «Ե(ր)փ» եւ այլն:

¹⁴ Թվականը նշված է «2Ճ2Ե.» ձևով, այսինքն՝ հարյուրավորը գրվել է երկու թվատառով՝ 700 (Չ) գրելուց հետո նշվել է մի ավելորդ 100 (Ճ): Դժվար է ասել՝ այդպես եղել է սկզբնագրում, թե՞ Պողոս արքեպիսկոպոսն է այդպես գրել: Ամեն դեպքում, թվականի 922 (775+551=1326) լինելը կասկածից վեր է:

հաջորդ եղբայր Օշինը մոնղոլ զորավարին դուրս քշեց Կիլիկիայից, միաժամանակ իր երկվորյակ եղբորը՝ Ալինախին, ուղարկեց մոնղոլական Օլջեյթու խուղաբանդա խանի մոտ՝ բողոքելու կատարված հանցագործության համար: Խանի մոտ բերված Բիլարդուն մեղավոր ճանաչվեց, եւ խանի պահանջով Ալինախն անձամբ սպանեց նրան¹⁵: Հենց այս պատմությունն է խիստ համառոտ տողերում ակնարկել չափածոյի հեղինակը եւ առանց Հեթումի ու Լեւոնի մահվան մասին նշելու եւ Բիլարդուի անունը տալու՝ գրում է, որ Ալինախը «եւ խնդիր արեան նոցին, եւ էառ զվրէժն՝ առջեւ խանին»:

Այս հատվածի վերջում էլ հիշվում է Օշին թագավորը՝ որպես ողորմած տիրակալ:

Երրորդ տունը վերաբերում է վերելում նշված անձանց՝ այդ ժամանակ հանգուցյալ Հեթում Բ.-ի, Լեւոն Գ.-ի, Ալինախի եւ Օշինի հոգու փրկությունը: Այն սկսվում է «Ի Քո ահեղ հրապարակին» տողով, որը հիշեցնում է Ներսես Շնորհալու՝ ննջեցյալների մասին երկի՝ «Տեառն Ներսեսի ասացեալ առ ի Քրիստոս ննջեցելոց»-ի մի հատվածը. «Ի յայնմ ահեղ հրապարակին, Յիշեա՛զսա յօրն ահագին...»¹⁶: Հեղինակն Աստծուց խնդրում է երկրորդ գալստյան ժամանակ ներել նրանց մեղքերը, նստեցնել Իր աջ կողմում եւ դասել սուրբ թագավորների շարքը, ինչպիսիք էին Աբգարը, Տրդատը, Թեոդորոսն ու Կոստանդինը:

Չորրորդ տունը նվիրված է Լեւոն Դ.-ին, ծավալով ավելի մեծ է նախորդներից (21 տող) եւ ունի մաղթողական բնույթ: Հեղինակը, դիմելով Բարձրյալին, խնդրում է թագավորին տալ շնորհ, երկար կյանք՝ երկրի վրա, պարգևել բարի զավակ, ինչպիսին որ ինքն է եղել իր ծնողի համար, երկիրը ղեկավարել Աստծու խոսքով, անմեղ մնալ եւ ճգմել սատանայի խայթոցները, զորանալ պատերազմում եւ հաղթել Իսմայելի ազգին (մահմեդականներին), պահել Քրիստոսի սերը եւ այլն: Վերջին չորս տողում նշում է թագավորի բերդաշինարար լինելու մասին՝ «շինել զբերդս իւր յիշատակ եւ իւր զարմի» (այս մասին ավելի մանրամասն կնշվի ստորեւ):

Այնուհետեւ հեղինակը թագավորին մաղթում է, որ Աստված նրան պարգևի «սուրբ թագունի»: Սա Լեւոն Դ.-ի կենսագրությանը վերաբերող մի ուշագրավ կետ է: Ինչպես հայտնի է, Լեւոնի խնամակալներից գլխա-

¹⁵ Այս մասին հանգամանորեն տես Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, Խաչակիրները եւ հայերը, հտ. Բ., Երեւան, 2007, էջ 380–386:

¹⁶ Ներսես Շնորհալու այս ստեղծագործությունը մուծվել է Հայոց Եկեղեցու ժամագիրք (Ժամագիրք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, Կոստանդնուպօլիս, 1893, էջ 108):

վորը՝ Օշին պալլը, չսպասելով թագավորի չափահաս դառնալուն, նրան ամուսնացրել էր իր դստեր՝ Ալիսի (Ալիծ) հետ: Այդ մասին վկայող աղբյուրներից միայն Հեթում Նղիրցու ժամանակագրության մեջ է նշվում, որ այդ ամուսնությունը տեղի է ունեցել հենց Լեւոնի թագադրման ժամանակ. «Եւ (օ)րհնեցին թագաւոր զԼեւոն որդի Օշնին Ա. ի փետրուարն: Եւ ի նոյն օրս պսակեցին զթագաւորս ի հետ տամուծէլ Ալիծին՝ դստերն պարոն Օշին Կօռիկոսոյ տերոջն»¹⁷: Հայտնի է, որ գահը ժառանգելու ժամանակ Լեւոնը 10 տարեկան էր (ըստ Հովհաննես Դարդեւի՝ 8 տարեկան)¹⁸, Ալիսը նույնպես պետք է որ այդ ժամանակ փոքր լիներ: Քանի որ Հեթում Նղիրցին 1326 թ. գրած չափածոյի մեջ Լեւոնին մաղթում է ունենալ «սուրբ թագուհի», կարելի է ենթադրել, որ 1320 թ. գահակալության ժամանակ միայն հայտարարվել է Լեւոնի եւ Ալիսի ապագա պսակադրության մասին: Համենայնդեպս, դատելով այս գրությունից, 1326 թ. այդ ամուսնությունը դեռ չէր կայացել¹⁹:

Երկի այս տան վերջին երկու տողում հեղինակը խնդրում է, որ Աստված թագավորին պարգևի գահաժառանգ՝ «զաւակ ուխտի՝ ժառանգել զայշխարքս հայրենի»:

Չափածոյի վերջին՝ 7 տողանոց հինգերորդ տունը, հեղինակի՝ Հեթում Նղիրցու մասին է: Ինչպես ընդունված է հիշատակարաններում եւ նմանատիպ երկերում, հեղինակներն իրենց մասին նշում են վերջում: Թագավորին ձոնված առատ խոսքերից հետո հեղինակը դիմում է Աստծուն՝ «Եւ ողորմեայ Քում ծառայի» խոսքերով, իրեն կոչում է պարոն Հեթում, որին Նղիրի տեր են անվանում, եւ խնդրում է եկեղեցաշինության գործում թափած ջանքերի համար իրեն նույնպես դրախտին արժանացնել:

Երկի վերջում՝ անհանգ երեք տողում, հեղինակն Աստծու ողորմածություն է հայցում Լեւոն թագավորի համար:

¹⁷ Ա. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Հեթում Ախուրց տիրոջ եւ Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, «Պատմա-բանասիրական հանդես», № 4, Երեւան, 1963, էջ 192, Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 547:

¹⁸ Յովհաննու Դարդեւի ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 27:

¹⁹ Այն, որ այդ ամուսնությունը կայացել է 1326-ից հետո, երեւում է նաեւ Հովհաննես Դարդեւի մի վկայությունից (Յովհաննու Դարդեւի ժամանակագրութիւն, էջ 29, տե՛ս նաեւ Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 410): Լեւոնի այս պսակադրության հետ կապված հետագա դեպքերը ողբերգական ընթացք ունեցան: Օշին պալլի կողմից գահը զավթելու վտանգ զգալով՝ Լեւոնը, խնամակալության ավարտին չսպասելով, 1329 թ. նախ ձերբակալեց, ապա սպանել տվեց Օշին պալլին եւ նրա եղբորը՝ Կոստանդին գունդաստաբլին, ինչպես նաեւ իր կնոջը՝ Ալիսին (այս մասին հանգամանորեն տե՛ս Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 394–404):

ԼԵՒՈՆ Դ. ԹԱԳԱՎՈՐԸ ԵՒ ՀԵԹՈՒՄ ՆԴԻՐՑԻՆ

Ե՛ւ Լեւոն Դ. թագավորը ե՛ւ Հեթում Նղիրցին հարուստ կենսագրութեամբ գործիչներ են, որոնց այստեղ անդրադառնում ենք շատ համառոտ՝ նկատի ունենալով, որ նրանցից մեկը ներկայացվող չափածոյի հասցեատերն է, մյուսը՝ հեղինակը: Երկի գրությունն 1326 թվականին հաջորդող շրջանի մասին նույնպես չենք խոսում՝ դուրս չգալու համար մեր նյութի ժամանակագրական շրջանակից:

Օշին թագավորի (1308–1320) որդին՝ Լեւոն Դ.-ն ծնվել է 1310 թ.: 1320 թ.՝ մահից առաջ գրած կտակում Օշինն իր որդու համար նշանակել է խնամակալներ՝ Օշին պալլին, նրա եղբորը՝ Կոստանդին գունդաստաբլին²⁰, եւ Հեթում Նղիրցուն, որոնք պետք է վարեն խնամակալությունը 10 տարի: Սամվել Անեցու ժամանակագրության շարունակողներից մեկն այդ մասին գրում է. «ԻՇԿԹ. (1320) թվին, փոխի մահուամբ առ Քրիստոս թագաւորն Օշին, եւ մինչ կենդանի էր, արար կտակ եւ եղ իր պալլ զՕշին տէրն Կոստիկոսու եւ զեղբայր իւր զԿոստանդին, եւ զպարոն Հեթում տէրն Նղրին, եւ վստահանայ ի նոսա զորդին իւր զԼեւոն... եւ զերկիրս Կիլիկիոյ կառավարել նոցա եւ սնուցանել զորդին իւր եւ ծառայել միամտութեամբ մինչեւ ժ. (10) ամս, եւ ապա յանձնել զաթոռ թագաւորութեան եւ զաշխարհս յորդին իւր Լեւոն...»²¹:

Լեւոն Դ.-ի խնամակալների եւ հատկապես Հեթում Նղիրցու դերի մասին ուշագրավ է Բարսեղ վարդապետի՝ 1325 թ. հիշատակարանը, որտեղ նշելով խնամակալ երկու եղբայրներին՝ Օշին պալլին (ավագ պարոն) եւ Կոստանդին գունդաստաբլին, գրում է, որ Հեթում Նղիրցին միացավ նրանց, ինչպես միտքը՝ հոգուն եւ մարմնին, արքունական տան գործերն ի բարին ուղղելով, ինչպես բարի միտքն է ուղղորդում հոգին ու մարմինը²²:

²⁰ Օշին պալլը եւ Կոստանդին գունդաստաբլը նշանավոր Հեթում պատմիչ Կոստիկոսցու որդիներն են:

²¹ Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, ժամանակագրութիւն, աշխատ.՝ Կ. Մաթեւոսյանի, Երեւան, 2014, էջ 274, տե՛ս նաեւ՝. Տեր-Պետրոսյան, հտ. Բ., էջ 395:

²² «...ի թագաւորութեանն Լեւոնի, որդւոյ Աշնի... զորոյ զթագաւորութիւնն յաղագս տղաւորութեան իւրոյ, խնամեն եւ հոգան երեք մեծագոյն եւ փառաւոր իշխանքն, երկու եղբայրքն հարազատ՝ պարոն Աշին եւ պարոն Կոստանդին, որք աստիճանաւ աւագ պարոն եւ գունդաստապլ կոչին, եւ երրորդն՝ պարոն Հեթում Նղրցի, որ խառնեալ եւ միացեալ է ընդ նոսա, որպէս միտք՝ ընդ հոգի եւ ընդ մարմին, ուղղելով զբոլոր տունն արքունի ի բարին, որպէս բարի միտքն զհոգին եւ զմարմինն...» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ. դար, կազմողներ՝ Լ. Նաչիկյան, Ա. Մաթեւոսյան, Ա. Ղազարոսյան, մասն Ա. Երեւան, 2018, էջ 495):

Հեթում Նղիրցին ձկեր գավառում գտնվող Նղիր բերդի տեր Կոստանդին իշխանի կրտսեր որդին էր²³: Արքունիքում նրա վարած պաշտոնը կոչվում էր ջամբուլա (ֆր. chambellan)՝ սենեկապետ նշանակությամբ, որը նաեւ դիվանագիտական գործառույթ ուներ: Հեթում Նղիրցուն՝ որպես դիվանագետի մասին Լեւոն Տեր-Պետրոսյանը գրում է. «Հանձին Հեթում Նղիրցուն՝ մենք գործ ունենք Կիլիկիո Հայոց պետության երեքհարյուրամյա պատմությանը հայտնի ամենաեռանդուն դիվանագետի հետ, որի ծավալած աշխատանքն ավելի շատ արտաքին գործերի նախարարի, քան սովորական դեսպանի գործունեություն է հիշեցնում: Ծառայելով հաջորդաբար Հայոց չորս թագավորների՝ Լեւոն Դ. (III)-ին, Օշինին, Լեւոն Ե. (IV)-ին ու Գի Լուսինյանին, Հեթումն իրականացրել է առնվազն դիվանագիտական յոթ առաքելություն, դեսպանագնացությամբ այցելել հինգ երկիր՝ Իտալիա, Ֆրանսիա, Սիցիլիա, Նեպոլիտոս, Բյուզանդիա»²⁴:

Հեթում Նղիրցին նաեւ ժամանակագրական մի երկի հեղինակ է, որը վերնագրված է «Համառօտ պատմութիւն ժամանակաց»²⁵: Այն որոշ հատվածներում հուշագրական բնույթ ունի, քանի որ հեղինակն իր մասնակցությամբ տեղի ունեցած դեպքերի մասին գրում է առաջին դեմքով (ժամանակագրորեն վերջին տեղեկությունը վերաբերում է 1344 թվականին, սակայն հնարավոր է, որ բնագիրը շարունակություն է ունեցել, որի թերթն ընկել է): Այդ գործը նա գրել է այն ժամանակ, երբ մահմեդականները գրավել էին Նղիր բերդը (1336 թ.), ուստի իշխանն արդեն Նղիրի տերը չէր եւ ժամանակագրության մեջ իրեն մի քանի անգամ կոչում է «Հեթում Ախտուց տէր»: Քանի որ Կիլիկիայում Ախտիք անունով տեղանուն չի հիշատակվում, համոզիչ է թվում Լեւոն Տեր-Պետրոսյանի այն ենթադրությունը, թե Հեթումն այդ մականունը վերցրել է «մեղքերի տեր», մեղապարտ իմաստով²⁶:

²³ Տե՛ս Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 528–531:

²⁴ Նույն տեղում, էջ 535: Այդ ուղեւորություններից մեկը՝ դեպի Սիցիլիա, Հեթում Նղիրցին կատարել է 1329 թ.՝ Լեւոն Դ.-ի համար հարսնացու բերելու նպատակով:

²⁵ Հեթում Նղիրցուն այս գործը միակ օրինակով պահպանվել է Բրիտանական գրադարանում՝ Օք 5458, որը ժամանակագրական երկերի ժողովածու է (նախկինում պատկանել է վիպասան Բաֆֆուն): Մատենադարանում պահվող մանրաթաղանթից օգտվելով՝ այն առաջին անգամ վերծանել եւ հրատարակել է Արտաշես Մաթեոսյանը (Ա. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 183–202), երկրորդ անգամ՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ ձեռագրի լուսատվենված թերթերի վերծանությամբ, մանրամասն ծանոթագրություններով (Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 527–553):

²⁶ Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 536–537:

Այսպես՝ ստորեւ ներկայացվող չափաժոն Հեթում Նղիրցու գրած եւ մեզ հասած երկրորդ գործն է: Քանի որ այն գրվել է Բարիքարուկ բերդում՝ Ս. Նիկողայոս եկեղեցու հիմնադրման առիթով, եւ հասցեագրված է Լեւոն Դ.-ին, կարելի է ենթադրել, որ հեղինակն իր այս ստեղծագործությունն ընթերցել է թագավորի համար գուցե հենց եկեղեցու հիմնարկերի ժամանակ կամ առնվազն նրան է տվել գրավոր տեսքով:

ԲԱՐԻՔԱՐՈՒԿ ԲԵՐԴԸ

Հեթում Նղիրցու այս չափաժոն արժեքավոր է Կիլիկիայի Բարիքարուկ (սեռականը՝ Բարիքարկու) բերդի հիշատակության առումով: Բանն այն է, որ այս բերդի անունը մինչեւ այժմ հայտնի էր հայկական երկու սկզբնաղբյուրից: Առաջինը Սմբատ Սպարապետի Տարեգրքի շարունակողի հաղորդումն է այն մասին, որ 1320 թ. հայոց զորքը երկիր ներխուժած Եգիպտոսի մամլուկների զորքին կոտորել է Բարիքարուկ բերդի առջեւ եւ Այասի սահմաններում. «Ի թուին 769 (1320) կոտորեցին զօրքն Հայոց զզօրսն Մսրայ առաջեւ Բարիքարկու եւ ի սահմանս Այասու»²⁷: Առաջ անցնելով ասենք, որ Դեւոնդ Ալիշանը, որին բերդի անվան միայն այս հիշատակությունն էր հայտնի, նշված մեջբերումն անելով, Բարիքարկու անվան կողքին փակագծում գրել է. «քննելի անուն եւ տեղի»²⁸: Այս վկայության մեջ նշվում է մի ճակատամարտի մասին, որը տեղի է ունեցել Բարիքարուկի առջեւ եւ Այասի տարածքի սահմաններում:

Բերդի անվան երկրորդ՝ ուղիղ ձևով հիշատակությունը՝ Բարիքարուկ, պահպանվել է 1360 թ. մի հիշատակարանում, որտեղ թվարկվում են այդ ժամանակ մամլուկների՝ Կիլիկիայում գրաված բնակավայրերի եւ բերդերի անունները. «Ի թուին ՊԹ. (1360), ի յամսեան ի մայիսի երեկ Հալպայ ամիրայն Պալտամուրն Մսրայ զօրօքն ի Հայք, նայ տուին զԱտանայ եւ զՏարսոն ու զԲարիքարուկն ու զՏղայ Լեւոնին»²⁹³⁰: Ցավոք, հիշատակարանը պահպանվել է միայն Դեւոնդ Փիրղալեմյանի ընդօրինակությամբ (նկ. 4): Դրանից քաղելով՝ «ԺԴ. դարի հիշատակարանների» ժողովածուում

²⁷ Տարեգրք Սմբատայ Սպարապետի, Փարիզ, 1859, էջ 128:

²⁸ Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 354:

²⁹ Խոսքը Լեւոնկլա (այժմ՝ Yilankale) բերդի մասին է:

³⁰ ՄՄ 6273, էջ 157 (Ղ. Փիրղալեմյանի «Նշխարք պատմութեան Հայոց» անտիպ աշխատությունը):

լեւոն խաչիկյանը բերդի անունը գրել է երկու բառով՝ «զԲարի-Քարուկն»³¹, բայց դատելով անվան՝ սեռական հոլովով պահպանված վկայություններից՝ «Բարիքարուկ», հավանական է, որ այն գրվել է արտասանվել է որպես մեկ բառ՝ Բարիքարուկ:

Այսպես՝ մեր նշած վկայություններում բերդի անունը հիշվում է պատմական տարբեր դեպքերի առնչությամբ՝ հարեւանցի³²: Մինչդեռ Հեթում Նղիրցու այս նոր հիշատակությունից իմանում ենք, որ 1326 թ. բերդի ներսում Ս. Նիկողայոս Սքանչեւագործի անունով եկեղեցի է կառուցվել լեւոն Դ.-ի տնօրինությամբ: Միաժամանակ, դատելով հեղինակի այն խոսքից, որտեղ թագավորի մասին ասում է՝ «Շինել զբերդս իւր յիշատակ եւ իւր զարմի», պետք է կարծել, որ հիմնովին վերաշինվել է նաեւ բուն բերդը: Եւ վերջապես, Հեթում Նղիրցին չափածոյի վերջում իր մասին գրելով՝ նշում է, որ ինքն էլ է «ջանացե(ա)լ սմայ շինի», այսինքն՝ որպես արքունի պաշտոնյա՝ սենեկապետ, ինքն էլ է մասնակցել այդ շինարարական գործերին:

Ինչ վերաբերում է Բարիքարուկ բերդի տեղորոշմանը, որը ցայժմ հստակ չէ, ապա այդ հարցով զբաղված Սամվել Գրիգորյանը որոշակի ենթադրություններ է կատարել³³: Նա վկայակոչել է նաեւ օտար աղբյուր՝ Եգիպտոսի սուլթանության պաշտոնյա, գիտնական-մաթեմատիկոս Ահմադալ-Կալկաշանդիի (1355—1418) հիշատակությունը³⁴: Վերջինս իր «Կույրի լուսաբացը գրագրության արվեստում» աշխատության մեջ ներկայացնում է նախկինում «Հայոցերկրին» պատկանած, իսկ հետագայում մամլուկյան պետության կազմի մեջ մտած քաղաքներն ու բերդերը: Մեզ հետաքրքրող հատվածում ալ-Կալկաշանդին գրում է. «Բարիքարուկի շրջան. Այն բերդ է Տարսոնին մերձ գտնվող լեռան կատարին՝ հյուսիսում՝ մոտավորապես կեսօրվա ճանապարհ հեռավորության վրա»³⁵:

³¹ ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 451:

³² ԺԴ. դարի կեսերին հիշվում է նաեւ մի իշխան՝ Կոստանդին Բարիքարեկեցի (Ղ. Ալեքսանյան, նշ. աշխ., էջ 542):

³³ Բարիքարուկ բերդի վերաբերյալ տվյալների համար շնորհակալություն ենք հայտնում Սամվել Գրիգորյանին, որը մեզ տրամադրել է իր անտիպ գոյատուրական ատենախոսությունը (SAMVEL GRIGORYAN, Les Arméniens et les Francs: étude historique et géographique de la noblesse et de son implantation dans l'Arménie méditerranéenne, Université Paul Valéry Montpellier III, 2021, էջ 382, 428, 429):

³⁴ ՏՆՍ SAMVEL GRIGORYAN, նշ. աշխ., էջ 429:

³⁵ Al-Qalqaşandī, Şubḥ al-a'şā fī şimā'at al-inşā', հատոր 4 (Կահիրե, 1914), էջ 135: Բնագրային աղբյուրը եւ հայերեն թարգմանությունը մեզ է տրամադրել Գագիկ Դանիելյանը:

Հստ Սամվել Գրիգորյանի վկայակոչած տվյալների եւ կատարած վերլուծության՝ հնարավոր է Բարիքարուկը նույնացնել Դաշտային Կիլիկիայի երկու բերդի հետ, մեկը Սսի եւ Այասի միջեւ գտնվող, այժմ Թումլու (Tumlu kalesi) կոչված բերդն է, մյուսը՝ Տարսոնից դեպի հյուսիս-արեւելք գտնվող, այժմ Գյոքվելիօղլու (Gokvelioglu kalesi) կոչվածը³⁶։ Մենք այդ ծավալուն հարցին այստեղ չենք անդրադառնա, քանի որ առայժմ հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել։ Միայն նշենք, որ Բարիքարուկում 1326 թ. Ս. Նիկողայոսի անունով եկեղեցու կառուցման փաստի ի հայտ գալը կարող է նպաստել բերդի տեղորոշման հարցի լուծմանը, եթե վերը նշված տեղերում հնագիտական հետազոտություններ կատարվեն։

Ս. ՆԿԻՈՂԱՅՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ

ԵՒ ԲԵՐԴԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես տեսանք, Հեթում Նղիրցու երկի գրության առիթը Բարիքարուկ բերդում եկեղեցու կառուցումն է եղել։ Սակայն հարց է առաջանում, թե ինչո՞ւ է այդ շրջանում պատմաքաղաքական բավականին բարդ իրավիճակում գտնվող Հայոց թագավորության՝ դեռ չափահասության հասած եւ փաստացի խնամակալների կամքին ենթակա թագավորը մի այդպիսի ձեռնարկի դիմել։

Շատ կարելի է չափածո երկի այն հատվածը, որտեղ հեղինակն Աստուծոց խնդրում է, որ թագավորի սրտի մեջ սեր ծագեցնի՝ կառուցելու բերդեր՝ ի հիշատակ իրեն եւ իր տոհմին.

«Ծագեայ զսէր Քոյ՝ իւր սրտի,

Շինել զբերդս՝ իւր յիշատակ եւ իւր զարմի»։

Այստեղ «զբերդս» արտահայտությունը կարելի է մեկնաբանել որպես մեկ բերդ՝ նկատի ունենալով, որ խոսքը Բարիքարուկի մասին է, կամ՝ բերդեր։ Այստեղ պետք է հիշել, որ նույն լեւոն Դ.-ի ժամանակ է կառուցվել նաեւ լեւոնկալամ «Տղայ լեւոնին» բերդը³⁷։ Ի դեպ՝ այդ բերդի «Տղայ լեւոնին» անվանումն էլ, որը, ինչպես տեսանք, կիրառվել է վերը նշված 1360 թվականի հիշատակարանում, ցույց է տալիս, որ այն պատանի թագավորի կողմից է կառուցվել (որպեսզի այն շշփոթվի նույնանուն մյուս թագավորների հետ)։

³⁶ ՏՆՍ SAMVEL GRIGORYAN, նշ. աշխ., էջ 428-433։

³⁷ ՏՆՍ SAMVEL GRIGORYAN, նշ. աշխ., էջ 172, 441-447։

Լեւոն Դ.-ի գահակալության հենց սկզբում ծավալված այս բուռն շինարարությունն իր բացատրությունն ունի: Այն պայմանավորված էր Հռոմի պապից ստացված դրամական խոշոր նվիրատվությամբ: Ներսես Պալիանենցը գրում է, որ 1321 թ.՝ Օշինի մահից հետո, Ռումի սուլթանության մոնղոլ կառավարիչ Տամուրտաշը մեծ զորքով ներխուժեց Կիլիկիա եւ ավերածություններ գործեց, բայց բերդերը չկարողացավ գրավել: Նրա հեռանալուց հետո երկիր խուժեց Ռումի սուլթանը եւ պաշարեց ծովեզերյա նշանավոր Այաս քաղաքը: Պատմիչը բավականին մանրամասն գրում է քաղաքի եւ նրա երկու բերդի պաշարման, թշնամուն ցուցաբերված դիմադրության, անգամ Կիպրոսից 9 նավի օգնության գալու մասին եւ այլն: Բայց, ի վերջո, քաղաքն ընկնում է. «Այսպես կորեաւ Այաս երկոքին [բերդո]վն իւր, գերեալ ի Տաճկացն»³⁸: Այս ողբերգության մասին լսելով՝ Հռոմի Հովհաննես ԻԲ. պապը 30 000 ֆլորին գումար է ուղարկում՝ Այասի վնասված բերդերի վերականգնման համար (Այասի նավահանգիստը չափազանց մեծ դեր ուներ Արեւմուտքի համար եւ Արեւելքի հետ միջերկրածովյան առեւտի առանցքային ու թերեւս միակ կետն էր): Ներսես Պալիանենցը գրում է. «[Զայս աղ]էտ կսկծանաց իբր լուաւ պապն [Զոհան]էս առաքեաց ԼԹ. (30 000) ֆլօրինս ոսկոյ, զի գ[լարձեալ շին]եսցին զբերդն Այասոյ... Եւ բազում յոյժ յաւելին [ի վերայ եւ շ]ինեցին զբերդան զայնոսիկ առ[աւել յոյժ] ամրագոյն եւ բարձրագոյն»³⁹: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ Հայոց թագավորությունն ստացել է շուրջ 35 000 ֆլորին⁴⁰:

Այսպես՝ Հռոմի պապից ստացվել է հսկայական գումար⁴¹, որն օգտագործվել է Այասի ամրությունների վերականգման ու նաեւ այլ բերդերի կառուցման կամ ամրացման համար: 1321 թ. Այասի աղետից հետո մահմեդական զորքը դուրս քշվեց երկրից, դրանից հետո պետք է Կիլիկիա հասներ նաեւ Հռոմի պապի ուղարկած դրամական օգնությունը եւ գործադրվեր բերդաշինության մեջ: Եւ ահա Հեթումը՝ 1326 թ. երկում փաստացի վկայվում է այդ գործընթացի մասին՝ Բարիքարուկի

³⁸ Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ., հտ. 2, կազմեց Վ. Հակոբյանը, Երեւան, 1956, էջ 189:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ SÉu Y. RENOARD, Une expédition de céréales des Pouilles en Arménie par les Bardi pour le compte de Benoît XII, “Mélanges de l'école française de Rome”, tome 53, 1936, էջ 290:

⁴¹ 1 ֆլորինը պարունակում էր 3,5 գրամ մաքուր ոսկի, այսինքն՝ 30 000 ֆլորինը 105 կգ ոսկի է: Հստ այդմ՝ 30 000 ֆլորինն այժմ միայն զուտ ոսկու արժեքով կկազմեր շուրջ 10,5 մլն դոլար:

օրինակով: Իհարկե, որպես քրիստոնյա մարդու՝ հեղինակի համար շատ կարեւոր էր բերդի ներսում եկեղեցու կառուցումը (պետք է ենթադրել, որ նախկինում այնտեղ նման կառույց չի եղել), ուստի չափածոն գրվել է հենց այդ առիթով: Սակայն այդտեղ նա հստակ նշում է նաեւ բերդաշինության մասին: Կարծում ենք՝ հատկանշական է, որ Բարիքարուկի եկեղեցին նվիրված է եղել համաքրիստոնեական սրբի՝ Արեւմուտքում մեծ համարում ունեցող Սուրբ Նիկողայոս Աքանչեւագործին:

ԱՄՓՈՓՈՒՄ

1326 թ. Կիլիկյան Հայաստանի Բարիքարուկ բերդում կառուցվել է Սուրբ Նիկողայոսի անունով եկեղեցի, որի առիթով արքունի սենեկապետ Հեթում Նղիրցին մի չափածո է գրել, որտեղ մեծարում է ժամանակի թագավորին՝ 16-ամյա Լեւոն Դ.-ին, որի երեք խնամակալներից մեկն էր (բնագիրը պահպանվել է ՄՄ 1347 ձեռագրում հետագայում կցված երկու թերթի վրա, որն ինչ-որ տեղից արտագրել է Պողոս աբեղան՝ Նրուսաղեմում):

Թեեւ չափածո երկը 5 տնից կազմված դրվատական բնույթի փոքրածավալ ստեղծագործություն է, սակայն արժեքավոր է նաեւ պատմական առումով: Նախ այն կարեւոր է Բարիքարուկ բերդի հիշատակությամբ, որի մասին շատ քիչ տվյալներ են հայտնի եւ որի տեղորոշումն անգամ հստակ չէ: Բերդում եկեղեցու կառուցման մասին տվյալը կարող է նպաստել նրա տեղորոշման խնդրի լուծմանը: Չափածոյից երեւում է, որ Բարիքարուկում ոչ միայն եկեղեցի է կառուցվել, այլեւ այն հիմնովին ամրացվել է: Դատելով հարակից տվյալներից՝ այդ ծավալուն շինարարությունը տեղի է ունեցել շնորհիվ դրամական խոշոր օժանդակություն, որն այդ ժամանակ Հայոց թագավորությունն ստացել էր Հռոմի պապից:

Հեթում Նղիրցին, որը հայտնի է որպես փորձառու դիվանագետ ու դեսպանորդ, թողել է նաեւ ժամանակագրական եւ հուշագրական բնույթի մի գործ («Համառօտ պատմութիւն ժամանակաց»), եւ այս չափածո երկը, փաստորեն, մեզ հասած նրա երկրորդ գրվածքն է:

ԲՆԱԳԻՐ

Հեթում Նղիրցի

Ի հիմնարկութիւն Սուրբ Նիկողայոս եկեղեցոյ ի բերդս Բարխարուկ⁴²
(Մատենադարան, ձեռ. 1347)

(1բ) Հայոց ի մեծի թուականիս ԶՃՀԵ. (1326) տարիս
Եղեւ հիմնադրիլ սուրբ տաճարիս
Յաստուածապահ եւ յա[ն]առիկ
Բարխարուկ՝ մէջ կլայիս.
Անուն կոչի սուրբ տաճարիս
Նիկալայոս սուրբ հայրայպետ Զմըռ[ն]ացիս:
Սուրբ աղաւթիւք հայրայպետին եւ սրբոյհոյ Աստուածածնին
Եւ Յովանոյ Կարապետին,
Աստուած հանկոյ զոգիք [ն]ոցին,
Որք ի սմայ հիմնարկեցին
Ի փրկութիւն Հայոց ազգին:

Շնորհեայ նոցայ ըզթողութիւն
Եւ գրեայ զանուա[ն]քն ի գիրն կենաց եւ ի դարութիւն,
Որոց անուանք սոցայ կո[չ]ինն՝
ԸզՀեթմոյ աւաք պարոնին,
Որ հեղ զարիւնն ի փրկութիւնս [Հ]այոց ազգին,
Եւ զԼեւոն սուրբ արքային,
Որ էր որդի եղբար նո[ր]ին
Եւ զպարոն Ալինա(խ)ին,
Որ ել խնդիր արեան նոցին,
Եւ էառ զվրէժն՝ առջեւ խանին,
Եւ զԱշինթագաւորին,
Որ պարգեւէր կարաւտելոց զողորմութիւն:

Ի Քո ահեղ հրապարակին
Ե(ր)փ գաս առնել մեզ զյարութիւն,

⁴² Վերնագիրը պայմանական է՝ ավելացված մեր կողմից. – Կ. Մ.:

Դասեայ զնոսայ յաջմէ Քո[յ]ին
 Եւ քաղցրութեամբ Քո թող սոցին,
 Զոր մեղուցին Քեզ ի յանձին,
 Զո[ն] (2 տող անընթեռնելի) ///
 (1գ) [Որ]պէս սոքայ արժանասցին
 Լսել զնոյն պատասխանին,
 (մէկ բառ անընթեռնելի)///դանել ընդ սուրբ թագաւորին՝
 Ընդ Աբգարու եւ Տրդատին,
 Թէոթոսին եւ Կոստանդին:

Տո՛ւր ի շնորհէ Քո պարգեւի
 Թագաւորիս մեր Լեւոնի՝
 Մնալ յերկար կենաւք յերկրի,
 Վայելել ի Քո պատուիրանի,
 Եւ տո՛ւր սմայ զաւակ բարի,
 Որպէս եւ զինք՝ իւր ծնողի,
 Պահեայ զսայ սուրբ ի յերկրի՝
 Հով(ու)ել զայշխարհս ըս(տ) Քում բանի,
 Անմեղք մնալ յայսմ մարմնի,
 Կոխել զխայթոցս սատանայի,
 Եւ զաւրացոյ ի պատերազմի՝
 Յաղթել ազգին Իսմայելի,
 Պահել զամէն Քրիստոսի սէր բարի,
 Ինք վայելեսցէ ըստ իւրում սրտի
 Եւ ծերութեամբ մնալ կարի՝
 Ըսդ սրբոյ Սիմէոնի,
 Ծագեայ զսէր Քոյ՝ իւր սրտի,
 Շինել զբերդս՝ իւր յիշատակ եւ իւր զարմի,
 Իւր պարգեւեայ սուրբ թագոյհի,
 Եւ տո՛ւր սո[ր]այ զաւակ ուխտի՝
 Ժառանգել զայշխարքս հայրենի:

Եւ ողորմեայ Քում ծառայի՝
 Պարոն Հեթոյ մեծի իշխանի,
 Որոյ Նդրին տէր անուանի,

Շնորհեայ նմայ զփոխարինի,
 Զոր ինք ջանացե(ա)լ սմայ շինի,
 Մոյծ եւ զնայ ի Քում գրախտի՝
 Հանգչել ի գոգն Աբրայհամի:

Քրիստոս Աստուած ողորմեայ հոգ(ւ)ոց սոցին եւ պահեայ զթագաւորն մեր զԼեւոն յանխոռվ խաղաղութիւն, փրկեայ զինք յամենայն կրից փորձողին. ամէն, ամէն:


ՀԻՄՆԱԲԱՌԵՐ


Կիլիկիա, Բարիքարուկ, բերդ, Հերոսմ Նդիրցի, Ալինախ, Այաս, Երուսաղեմ, հիշատակարան, գրիչ:

РЕЗЮМЕ


В 1326 году в крепости Барикарук в Киликийской Армении была построена церковь во имя Святого Николая Чудотворца. По случаю этого события царский камергер Хетум Нгирци написал стихотворение, в котором прославляет царя того времени, шестнадцатилетнего Левона IV, одним из трёх опекунов которого он был. Этот стих сохранился в рукописи Матенадарана № 1347 на двух листах, позже прикреплённых к ней, которые были скопированы откуда-то иеромонахом Погосом в Иерусалиме.

Хотя стихотворение представляет собой небольшое произведение с голубиным характером, состоящее из пяти строф, оно также ценно с исторической точки зрения. Прежде всего, оно важно упоминанием крепости Барикарук, о которой известно очень мало и местоположение которой даже не определено. Информация о строительстве церкви в крепости может способствовать решению вопроса о её местоположении. Стих показывает, что в Барикаруке была не только построена церковь, но и основательно укреплена. Судя по имеющимся данным, это масштабное строительство осуществлялось благодаря крупной финансовой помощи, которую в то время Армянское царство получило от Папы Римского.





Նկ. 3. Պողոս արեղայի երկու հիշատակագրությունները (ՄՄ 1347, էջ 210բ)



Նկ. 4. 1360 թ. հիշատակարանի հատված՝ «Բարիբարոկ» բերդի անվան նշումով՝ Ղ. Փիրղալեյանի ընդօրինակությամբ (ՄՄ 6273, էջ 157)

Хетум Нгирци, известный как опытный дипломат, также оставил труд хронологического и мемуарного характера, и это поэтическое произведение, по сути, является его вторым дошедшим до нас произведением, который публикуется впервые.

SUMMARY

In 1326, a church dedicated to St. Nicholas the Wonderworker was built in the fortress of Barikaruk in Cilician Armenia. To mark the occasion, the royal chamberlain Hethum Nghirtsı wrote a poem praising the king of the time, sixteen-year-old Leo IV, for whom he was one of three guardians.

This poem is preserved in the Matenadaran manuscript N 1347 on two sheets later attached to it, which were copied from somewhere by Hieromonk Poghos in Jerusalem. Although the poem is a short, dovish work consisting of five stanzas, it is also valuable from a historical perspective. First of all, it is significant for its mention of the Barikaruk fortress, about which very little is known, and whose location has not even been determined. Information about the construction of a church within the fortress may help resolve the question of its location. The verse indicates that not only was a church built in Barikaruk, but it was also thoroughly fortified. Judging by the available data, this large-scale construction was carried out thanks to the substantial financial assistance the Armenian Kingdom received from the Pope at the time.

Hethum Nghirtsı, known as an experienced diplomat, also left behind a chronological and memoir work, and this poetic work is, in fact, his second surviving work, which is published here for the first time.

